ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 2 (7) 1941 թ., Երևան

ՀՈՎՀ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՅՈՒԼԻ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՇՈԿԱԼՍԿԻ

Լենինգրադում, վախճանվեց Սովետական Միության հռչակավոր աշխարհագետ Յուլի Միխայլովիչ Շոկալսկին։ Նրա կյանքը, բազմակողմանի և բազմօգուտ գործունեությունը մեծ հետաքրքրություն են ներկայացնում յուրաքանչյուր աշխարհագետի համար։ Նա իր երկարամյա կյանքի ընթացքում մասնագիտացել էր գլխավորապես հիդրոլոգիայի և քարտեզագրության բնագավառներում։ 1877 թ. ավարտելով Պետերբուրգի Ծովային Ակադեմիան, Յուլի Միխայլովիչը, որպես հիդրոլոգ, իրեն նվիրում է նախկին Ռուսաստանի և ապա ՍՍՌՄ կանգուն ու հոսող ջրերի (ծովերի, լճերի, գետերի), երկրագնդի ջրային ընդարձակ տարածության, ըստ Շոկալսու՝ «համաշխարհային օվկիանոսի»՝ ուսումնասիրության գործին։ Նա ուսումնասիրել է Ուրալից սկիզբ առնող գետերը, Վիչեգդան, հետազոտել է Լադոգա լիճը, մասնակցել է Կասպից ծովը ուսումնասիրող էքսպեդիցիային (1924—27 թ.թ.), ղեկավարել է Սև ծովը նոր մեթոդներով ուսումնասիրելու աշխատանքները, կատարել է Ասիական Ռուսաստանի գետերի երկարության չափումները։ Նրա „Океанография“ (Օվկիանոսագրություն) հռչակավոր աշխատությունը՝ մեծահատոր մոնոգրաֆիան, որն ավարտվել է 1917 թ., առաջինն էր Ռուսաստանում և արժանացել է Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի ու Փարիզի Ակադեմիայի բարձր մրցանակներին։

Յու. Մ. Շոկալսկին խոշորագույն աշխատանքներ է կատարել նաև քարտեզագրության և գեոդեզիայի բնագավառներում։ Տիլլոյի հետ Շոկալսկին կատարել է Ասիական Ռուսաստանի մակերեսի չափումը. 1905 թ. կազմել է Եվրոպական Ռուսաստանի քարտեզը՝ 1:2.000.000 մասշտաբով. խմբագրել է Ա. Ֆ. Մարքսի հրատարակությամբ լույս տեսած հայտնի մեծադիր ատլասը. 1913 թ. կազմել է Ասիական Ռուսաստանի գիպսոմետրիկ քարտեզը՝ 1:2.500.000 մասշտաբով. կազմել է Սովետական Միության Ասիական մասի ռելյեֆ քարտեզը, Հյուսիսային բևեռային շրջանների ֆիզիկական քարտեզը։

Շոկալսկին ամենաակտիվ մասնակցություն է ունեցել „Большой Советский Атлас Мира“*-ի (Աշխարհի Սովետական Մեծ Ատլաս) քարտեզագրական աշխատանքներին. Նա է կազմել դպրոցական փոքր ատլասը, որ սպառվել է 2 միլիոն օրինակով, կազմել և խմբագրել է տասնյակ քարտեզներ։*

Մեծ էր Շոկալսկու մասնակցությունը Ռուսական Պետական Աշխար-

հագրական Ընկերության աշխատանքներին։ 1885 թ. ընտրվել է հիշյալ ընկերության իսկական անդամ։ 1914 թ., Շոկալսկին ընտրվում է Ռուսական Պետական Աշխարհագրական Ընկերության փոխ-նախագահ, 1917 թ. նախագահ, իսկ 1931 թ.՝ պատվավոր նախագահ։ Կես դարից ավելի, մոտ 54 տարի, իր բեղմնավոր կյանքի ամենաեռուն ժամանակը Շոկալսկին անձնվիրաբար տվել է Աշխարհագրական Ընկերության գործունեությանը։ Այդ պաշտոններում նա ղեկավարել է էքսպեդիցիոն աշխատանքներ, կազմակերպել է գիտական նիստեր և զեկուցումներ, խմբագրել է գիտական հրատարակություններ և այլն և այլն։ Անսպառ էր նրա եռանդը։

1895 թվականից սկսած Յու. Մ. Շոկալսկին նախ Ռուսաստանի և ապա ՍՍՌՄ-ի կողմից անփոփոխ կերպով մասնակցել է Միջազգային աշխարհագրական կոնգրեսներին— 1895 թ.՝ Լոնդոնում, 1913 թ.՝ Հռոմում, 1934 թ.՝ Վարշավայում, որտեղ կարդացել է քարտեզագրության և օվկիանոսագրության մասին մի շարք արժեքավոր զեկուցումներ, ցուցադրել քարտեզներ, ղեկավարել գիտական նիստեր և այլն։ Նա Ռուսաստանի ներկայացուցիչն էր նաև գեոդեզիական և քարտեզագրական համագումարներում ու կոնֆերանսներում։

Յու. Մ. Շոկալսկին, որպես փայլուն մանկավարժ, մեծ մասնակցություն է ունեցել աշխարհագետների, քարտեզագետների, գեոդեզիստների, հիդրոլոգների, մետեորոլոգների կադրերի պատրաստման գործում։ Շոկալսկին երկար տարիներ, որպես պրոֆեսոր, դասախոսել է Ծովային Ակադեմիայում, ապա Լենինգրադի համալսարանում։ Նրա հետաքրքրական, պատկերավոր դասախոսությունները գրավում էին ունկնդիրների և ուսանողների մեծ մասսաներ։

Շոկալսկին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից էր, իսկ 1939 թ. արժանացավ գիտական բարձր պատվի, Գիտ. Ակադեմիայում ընտրվեց պատվավոր անդամ։ Նա թողել է 460-ից ավելի գիտական աշխատություններ։

Սովետական և համաշխարհային գիտությունը հավերժացրել է Յու. Մ. Շոկալսկուն, դեռ ևս նրա կենդանության ժամանակ, Յու. Շոկալսկու անունով կոչելով՝ Հյուսիսային Երկրում և Անտարկտիկայում՝ երկու նեղուց, Կարայի ծովում՝ մի կղզի, Կանին թ.-կղզում՝ մի լիճ, Պամիրում՝ մի սառցադաշտ, Ասիայում՝ մի լեռնագագաթ և Արկտիկայում՝ մի տաք ծովային հոսանք։